Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

USAID-03/23

Ծրագրի մասին: ՀՏԶՀ/ԱՄՆ ՄԶԳ Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների ծրագրի թիմի ղեկավարի տեղակալ – համայնքային զարգացման մասնագետի ընտրություն

«Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների» ծրագիրը ֆինանսավորվում է ԱՄՆ կառավարության կողմից և իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Դրամաշնորհը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ՏԻՄ համակարգի հզորացման, համայնքային ծառայությունների բարելավման և կառավարության ապակենտրոնացման քաղաքականությանն աջակցելու նպատակով: Ծրագիրը մեկնարկել է 2022թ. դեկտեմբերի 1-ին և նախատեսվում է ավարտին հասցնել 2027թ. նոյեմբերի 30-ին:

Պատասխանատվության շրջանակ, նկարագիր

Ծրագրի ղեկավարի տեղակալի (ԾՂՏ) պաշտոնը զբաղեցնող անձը ունենալու է խորհրդատուի կարգավիճակ, որի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիա-իրավական պայմանագրի հիման վրա:

Ծրագրի ղեկավարի տեղակալը լիարժեք աշխատանքային ծանրաբեռնվածությամբ աշխատում է ծրագրի թիմում, հաշվետու է ծրագրի ղեկավարին և հանդիսանում է ծրագրային ամբողջ գործունեության համար պատասխանատվություն կրող երկրորդ անձը:

Ծրագրի ղեկավարի տեղակալը՝

- անմիջապես վերահսկում է պայմանագրերի իրականացումը
- պատասխանատու է ծրագրի տարեկան, կիսամյակային և եռամսյակային հաշվետվությունների, ինչպես նաև մոնիթորինգային հաշվետվությունների ստացման ժամկետների համար,
- մասնակցում է ապրանքների և ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքների և աշխատանքի նկարագրերի կազմմանը և գնումների գործընթացներին,
- պատասխանատվություն է կրում համայնքային ծրագրերի առաջարկների ձևավորման, վերջնաժամկետների պահպանման համար,
- սերտորեն աշխատում է ծրագրի փորձագետների և խորհրտատուների հետ՝ աջակցելով վերջիններիս առջև դրված խնդիրների լուծմանը,
- մասնակցում է դոնորի և գործընկերների հետ հանդիպումներին,
  սերտորեն աշխատում է համայնքների ներկայացուցիչների հետ և կատարում է ծրագրի ղեկավարի այլ հանձնարարություններ:

Թեկնածուն պետք է պատրաստ լինի հաճախակի գործուղումների մեկնել Հայաստանի մարզեր, ունենա հաղորդակցության գերազանց ունակություններ, ինչպես նաև սեղմ ժամկետներում ծավալուն խնդիրներ լուծելու կարողություն:

Պայմանագրի ժամկետը՝ 1 տարի (5 տարի երկարացման հնարավորությամբ):

Փորձագետի պահանջվող որակավորումները

- Տնտեսագիտության, բիզնեսի և վարչարարության, հանրային կառավարման, սոցիոլոգիայի և հարակից ոլորտների բարձրագույն կրթություն (դիպլոմ կամ մագիստրոսի աստիճան)՝:
- Համայնքային կամ մարզային զարգացման ծրագրերի իրականացման՝ նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ՝ միջազգային կամ տեղական կազմակերպություններում:
- Համայնքային զարգացման ոլորտին առնչվող (հանրային ծառայությունների մատուցում, մունիցիպալ կառավարում, համայնքային կարողությունների հզորացում, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում և այլն) գիտելիք և փորձ:
- Մոնիթորինգի և դրա մեթոդների ու գործընթացների ընդհանուր իմացություն, ծրագրի արդյունքների գնահատման, ծրագրային թիրախների և ցուցիչների կիրառման վերաբերյալ ընդհանուր պատկերացում:
- Հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացությունը պարտադիր է:

Հաղորդակցության հմտություններին տիրապետելը կդիտարկվի որպես առավելություն:

Ինքնակենսագրականները և ուղեկցող նամակը (միայն անգլերեն), որում շարադրված կլինեն պաշտոնին հավակնելու նկատառումները, թեկնածուի մրցակցային առավելությունները և մասնագիտական կարողությունները, պետք է ներկայացվեն էլ-փոստով՝ atdf@atdf.am, procurement@atdf.am հասցեով, ոչ ուշ քան **2023թ. ապրիլի 20-ը, ժամը 17:00-ը:**

Էլեկտրոնային նամակի “Subject” պատուհանում խնդրվում է նշել «Ծրագրի ղեկավարի տեղակալ»: